գերու ազատության, հավասարության և եղբայրակցության դրոշները բարձրորեն կծածանին։ Հայաստանի հնագույն և նորագույն կուլտուրական աշտարակները Ամերիկայի մեջ մեր սրտերը կլեցնեն հպարտությամբ և հրճվանքով։

Հայաստանի իմ այցելությունս 25 տարիներե հետո ինձի համար պիտի ըլլար հիշատակելի ճամբորդություն մը, և ես գիտեմ, որ Ձեզմե շատ բան պիտի սորվեի։ Ձեզ հանդիպել և Ձեզ անձնապես ճանչնալը ինձի համար հազվագյուտ բերկրանք մը և առանձնաշնորհ մը պիտի ըլլար։ Թեև Ձեզմե բաժնված եմ հազարավոր մղոններով, ոգիով Ձեզի հետ եմ, և ուղարկելով Ձեզի իմ սրտագին ողջույններս և լավագույն բաղձանքներս, կհուսամ, որ ձիս նորեն պիտի հրավիրեք, Ձեր երրորդ համագումարին։

ԼԵՎՈՆ Զ. ՍՅՈՒՐՄԵԼՅԱՆ

Հոլիվուտ, Կալիֆորնիա

(«Ժողովուրդի ձայն» թիվ 1272)

ԷՏԿԱՐ ՇԱՀԻՆԻ ՄԱՀԸ

«Արևմուտք»-ը հաղորդում է.—

Մարտի 18-ին մեռավ անուանի արուեստագետ Էտկար Շահին։ Հուղարկավորությունը կատարվեցավ 21 մարտի, ուրբաթ օրը, Հայոց եկեղեցիին մեջ։ Դժբախտաբար մահը և հուղարկավորությունը ուշ ծանուցուած ըլլալով, շատեր չկրցան հարգանքի իրենց վերջին տուրքը հատուցանել մեծ արվեստագետին։

Մնած էր 1874-ին Պոլիս։ Երկրորդական ուսումն առած էր Վենետիկի Մխիթարյաններուն մոտ։ Ժամանակ մը Վենետիկ իտալացի նկարչի մը ձեռքին տակ աշխատելե ետք Փարիզ անցավ և հոն աշակերտեցավ Ժան-Փոլ Լորանսի և Պենժամեն Գոնսթանսի։ Հետո ինքզինքը տուավ գծագրության, կիրարկելով Օֆարտ, Թուեաբսել և Կոեն,ան շուտով գնահատուեցավ և պատկերազարդեց օրվան ամենեն նշանավոր գրագետներու գործերը։ Հիշենք Լե Ֆետ Ֆոռեեր, Պաուեսի, Անաթոլ Ֆրանսի, Գոլեթի, Կոնքուրներուն և այլն գործերը։ Իր մասին բազմաթիվ գնահատական ուսումնասիրություններ հրատարակած են ֆրանսացի, իտալացի և անգլիացի արուեստի քննադատներ։

Շահին, ի մեջ այլոց, մեծ դիմանկարիչ մըն էր։

Դամբանականներ խոսեցան Արտավազդ Արքեպիսկոպոս և ուրիշներ։

Եվրոպայի թեմի Առաջնորդ Գեր. Տ. Արտավազդ Արքեպիսկոպոսի վրա պարտականություն է ընկնում, Փարիզի Հայ հասարակական կազմակերպությունների օգնությամբ, հավաքել անվանի արվեստագետ Էդգար Շահինի գործերը և կենտրոնացնել դրանք մեր ծաղկող Հայրենիքում՝ Սովետական Հայաստանում։

ԽՄԲԱԳՐ.

Դեռ ևս 1936 թվին ՀՍՍՌ Կերպարվեստի Պետական Թանգարանը կազմակերպել էր Էդգար Շահինից ստացված օֆորտների ցուցահանդեսը, որը մեծ հետաքրքրություն էր առաջ բերել Երևանի արվեստասեր հասարակայնության մեջ։